31.03.2020թ. կնքված **ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-40** պայմանագրի
շրջանակներում ապրանքների մատակարարման վերաբերյալ

**համաձայնագիր № 1**

ք. Երևան

15 ապրիլի 2020թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Բ.Թադևոսյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և № «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-40» պայմանագրի 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**Համաձայնագրի առարկան**

1. Հաշվի առնելով Վաճառողի գրությունը և նոր կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված արտակարգ իրավիճակը, ինչպես նաև հիմք ընդունելով 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կողմերը որոշեցին մարտի 31-ին կնքված № ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-40 պայմանագրով ձեռքբերվող ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 15 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-40» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ<br>Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12<br>Երևանի թիվ 1 ՏԳԲ<br>Հ/Հ 900018004649<br>ՀՎՀՀ 02625503<br>Գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ<br>Հասցե՝ ք.Երևան, Արզումանյան 32-10<br>Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 15700-11489540100<br>ՀՎՀՀ 01210095<br>Տնօրեն՝ Բ.Թադևոսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |